

ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնում բացահայտվել են միացություններ, որոնք կարող են նպաստել նոր հակամանրէային դեղերի ստեղծմանը

ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի գիտնականները բացահայտել են նոր միացություններ՝ ոչ սպիտակուցային ամինաթթուներ և սինթետիկ պեպտիդներ, որոնք օժտված են յուրահատուկ հակամանրէային ակտիվությամբ և պրոտեազներ արգելակելու ունակությամբ: Դրանցից են ոչ սպիտակուցային ամինաթթու (2R,3S)-հիդրոքսիլեյցիլը և սինթետիկ պեպտիդ N-ֆորմիլ-մեթիոնիլ-(2R,3S)-հիդրոքսիլեյցինը: Այս միացություններն ունակ են նաև արգելակելու սերինային պրոտեազներ, օրինակ՝ տրիպսինը: Դիպեպտիդ N-t-BOC-գլիցիլ-(S)-2-ամինա-3-(4-(4-ֆտորֆենիլ)-էթիլ)-ֆենիլ)-n-ալանինը (N-t-BOC-գլիցիլ-zm68) արգելակում է *Clostridium histolyticum* պաթոգեն մանրէներից արտազատված կոլագենազը, որը նպաստում է տեր բջիջների քայքայմանը բորբոքային գործընթացների ժամանակ:

«Հակաբիոտիկների նկատմամբ կայուն մանրէների առկայությունը և տարածումը ժամանակակից բժշկության մարտահրավերներից են, որոնք ստիպում են գիտ-

նականներին փնտրել այլընտրանքային ճանապարհներ՝ կայուն մանրէների դեմ պայքարելու համար: Ուղիներից մեկը նոր հակամանրէային ակտիվությամբ օժտված միացությունների բացահայտումն է: Մենք հետազոտեցինք սինթետիկ ամինաթթուների և պեպտիդների ազդեցությունն արտաքին միջավայրից անջատած հակաբիոտիկների նկատմամբ կայուն *Pseudomonas*, *Xanthomonas* և այլ ցեղերի շտամների աճի վրա և բացահայտեցինք ոչ սպիտակուցային ամինաթթու HS100, որն արգելակում է կայուն մանրէների՝ *Klebsiella*, *Streptococcus* և *Staphylococcus* մանրէների որոշ շտամների աճը՝ նվազեցնելով մանրէների տիտրը մոտ 5 կարգով», - ասաց հետազոտության գիտական ղեկավար, ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի էկոլոգիական անվտանգության լաբորատորիայի վարիչ, կենսաբանական գիտությունների թեկնածու Նելլի Յովհաննիսյանը:

Հետազոտության կիրառական նշանակությունն այն

է, որ հակամանրէային ակտիվությամբ օժտված նոր միացությունները կարող են նպաստել նոր հակամանրէային դեղերի ստեղծմանը:

Հետազոտության արդյունքում ստացված գիտական արդյունքները տպագրվել են ՀՀ գիտական ամսագրերում, ներկայացվել միջազգային գիտաժողովներում:

Հետազոտությունը կատարվել է «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնում բազային ֆինանսավորմամբ իրականացվող «*Pseudomonas* և *Xanthomonas* ցեղերին պատկանող մանրէների հակաբիոտիկների նկատմամբ կայունության հաղթահարումը» ծրագրի շրջանակներում: Հետազոտական աշխատանքներում ներգրավված են երիտասարդ գիտնականներ: Ծրագրի շրջանակներում երևանի պետական համալսարանի ուսանողները գրել են երկու ավարտական աշխատանք և երկու մագիստրոսական թեզ:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին